Հավելված 3
<<ԱՅԴ-ՇՀ-ԱՊՁԲ-15/1-5>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի

# ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ

**ԱՅԴ-ՇՀ-ԱՊՁԲ-15/1-5**

**ք.Արտաշատ** **<< >> << >>2015թ.**

<< Արտաշատի Հ.Ճգնավորյան անվան հ.5 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ռուզան Հայրապետյանի, որը գործում է << Արտաշատի Հ.Ճգնավորյան անվան հ.5 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և ,________________________ե ______-ն, ի դեմս տնօրեն ______________յանի (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին (այսուհետ՝ Ստացող) հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված սննդամթերքի /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

## 2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնու է Գնորդին:
2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը է սահմանվում առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագրը կնքելու օրվանից, բացառության այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

## 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից,

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը,
բ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը,

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը,
3.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը,
3.1.4.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) հանձնվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,
բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,
3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
3.2 Գնորդը պարտավոր է՝
3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները,
3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին,

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը,

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:
3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:
3.4 Վաճառողը պարտավոր է՝
3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում,
3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք,
3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր,
3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը,
3.4.5 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը,
3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը,
3.4.7 Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները,
3.4.8 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ -----------( -- -- -------------) ՀՀ դրամ:

Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է Պայմնագրի N 2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիմման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է Պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:
4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

## 5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:
5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանգրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ մինչև Ապրանքի հանձնման ամսվան հաջորդող ամսվա երկրորդ աշխատանքային օրը գնորդին է ներկայացնում հանձնած ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Արձանագրությունները ստորագրվում են, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները,
բ) վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Պայմանագրով և դրա հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր:

9.3 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանգիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում.

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները որոշվում և դրանց փոփոխությունը գնահատվում է՝ հետևյալ կերպ.

-----------------------------------------------------------

-----------------------------------------------------------

(Կարգը սահմանվում է Պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ):

Պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, չի կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Գնորդի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումները:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.8 Պայմանագիրը և հավելվածները կազմված են ____ /____/ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները (կազմված __ /____/ էջից), համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.9 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ___________________________________ | ___________________________________ |
| _________________________ | _________________________ |
| ____________________________ | ____________________________ |
| _______________________________ | _______________________________ |
| ____________________________ | ____________________________ |
| --------------------------___ ___________ | --------------------------___ ___________ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 1
<<__>> <<____________>> 2015 թ.-ի կնքված
<<ԱՅԴ-ՇՀ-ԱՊՁԲ-15/1-5>> ծածկագրով
գնման պայմանագրի

# ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Չ/մ | Ապրանքատեսակի նկարագիրը | Արտադրող, ապրանքային անվանումը,քաշը,յուղայնություն և այլ ֆիզիկական նկարագրեր | մատակարարման պայմանը (օրեկանշաբաթական, ամսեկան)* | Քանակը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հաց մատնաքաշ | կգ | Ցորենի ալյուր | Ցորենի ալյուրից թողարկված ,հատով, փաթեթավորված,կամառանցփաթեթավորմանպատրաստրվածբարձրտեսակիալյուրից ՀՍՏ3199:Անվտանգությունը ըստ 2 III-4-9-012003(ՌԴՍանՊին2.3.2.107801)սանիտարա-համաճարակային կանոնների և նորմերի և ,,սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի | Օրական | 5942,8 |
| 2 | Մակարո, նեղեն | կգ | Մակարոն սովորական | Մակարոնեղենանդրոժխմորից,չափածրարված,ԳՕՍՏ87592կամհամարժեքը:Անվտանգությունըստ N2III4.9012010հիգիենիկ,նորմատիվներիև<<Սննդամթերքիանվտանգությանմասին>>ՀՀօրենքի9-րդ հոդվածի | Ամսական | 540,3 |
| 3 | Բուսական յուղ արևածաղկի (ձեթ) | կգ | Արևածաղկի ձեթ՝ ռաֆինացված (զտված) | Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզմանևճզմմանեղանակով,բարձրտեսակի,զտված,հոտազերծված,փաթեթավորումը՝շշալցվածմինչև1կամ3լիտրտարողություններում,ԳՕՍՏ1129-93: Անվտանգությունն ըստN2III4.9012010հիգիենիկնորմատիվների և<<Սննդամթերքիանվտանգությանմասին>>ՀՀօրենքի 9-րդ հոդվածի | Ամսական | 594,3 |
| 4 | Ոսպ | կգ | հատիկավոր | Մաքուր, չոր՝խոնավությունը 14 %-ից ոչ ավելի, միջին չորությունը՝ 14.0-17.0 % ոչավելի, ԳՕՍՏ 7066-77: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվներիև<<Սննդամթերքի անվտանգության մասին>>ՀՀօրենքի 9-րդ հոդվածի | Շաբաթական | 810,4 |
| 5 | Բրինձ | կգ | Սպիտակ հատիկավոր | Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13 %-իցմինչև 15 %, ԳՕՍՏ 6293-90: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվներիև<<Սննդամթերքի անվտանգության մասին>>ՀՀօրենքի 9-րդ հոդվածի | Շաբաթական | 594,3 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6 | Հնդկաձավա ր | կգ | հատիկավոր | Հնդկաձավար I տեսակի, խոնավությունը՝ 14.0 %-ից ոչավելի, հատիկները՝ 97.5 %-իցոչպակաս, գործարանայինպարկերով, ԳOUS 5550-74: Անվտանգություննըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվներիև<<Սննդամթերքիանվտանգությանմասին>>ՀՀօրենքի 9-րդհոդվածի | Շաբաթական | 810,4 |
| 7 | Հավի միս | կգ | Հավի բուդ | Հավի մսեղիք սառեցրած, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, ԳOUS 25391-82: Անվտանգությունն ըստ N2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի | Շաբաթական | 810,4 |
| 8 | Մրգահյութ | լիտր | 1 լիտրանոց տարայով (գործարանային փաթեթավոր ման) | Պատրաստի օգտագործման բնական հյութ Մրգահյութեր՝ պատրաստված թարմ մրգերից և պտուղներից, պտղամսով, շաքարի օշարակի հավելումով կամ առանց դրա, արտաքին տեսքով պարզ՝ նստվածքի զանգվածային մասը 0,2% ոչ ավելի և ոչ պարզ՝ 0,8% ոչ պակաս, ԳOUS Ռ 52184-2003, ԳOUS Ռ 52185-2003 կամ ԳOUS Ռ 52186-2003: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-ի թիվ 744-Ն որոշմամբ հաստատված ՅՀյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիՄՆ, ՅՍննդամթերքի անվտանգության մասինՄՆ ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | Ամսական | 1836,9 |

**Պարտադիր պայման՝ մատակարարումը վաճառողի կողմից:**

**ԳՆՈՐԴ**

_____________________
__________________________________
________________________
___________________________
______________________________
___________________________

---------------------------___ ___________
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

_____________________
__________________________________
________________________
___________________________
______________________________
___________________________

---------------------------___ ___________
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 2
<<__>> <<____________>> 2015 թ.-ի կնքված
<<ԱՅԴ-ՇՀ-ԱՊՁԲ-15/1-5>>ծածկագրով
գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| ՀՀ | Չափաբաժնի անվանումը | Չափ. Միավոր | Միավորի գինը / դրամ/ | Նախատեսվում է գնել 2015թ. | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | | | | քանակ | գին | քանակ | գին | քանակ | գին | քանակ | գին | քանակ | գին |
| 1 | Հաց մատնաքաշ | կգ | | 849 | | 2547 | | 3396 | | 5943 | | 5943 | |
| 2 | Մակարո, նեղեն | կգ | | 77 | | 232 | | 309 | | 540 | | 540 | |
| 3 | Բուսական յուղ արևածաղկի (ձեթ) | լիտր | | 85 | | 255 | | 340 | | 594 | | 594 | |
| 4 | Ոսպ | կգ | | 116 | | 347 | | 463 | | 810 | | 810 | |
| 5 | Բրինձ | կգ | | 85 | | 255 | | 340 | | 594 | | 594 | |
| 6 | Հնդկաձավար | կգ | | 116 | | 347 | | 463 | | 810 | | 810 | |
| 7 | Հավի միս | կգ | | 116 | | 347 | | 463 | | 810 | | 810 | |
| 8 | Մրգահյութ | լիտր | | 262 | | 787 | | 1050 | | 1837 | | 1837 | |
| **Ընդամենը՝** | | | | | **0** | | **0** | | **0** | | **0** | | **0** |

**ԳՆՈՐԴ**

____________________
________________________________
_______________________
__________________________
_____________________________
__________________________

---------------------------___ __________
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

____________________
________________________________
_______________________
__________________________
_____________________________
__________________________

---------------------------___ __________
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
<<__>> <<____________>> 2015 թ.-ի կնքված
<<ԱՅԴ-ԾՅ-ԱՊՁԲ-15/1-5>>ծածկագրով
գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ Հ | Չափաբաժնի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հունվար % | Փետրվար % | Մարտ % | Ապրիլ % | Մայիս % | Հունիս % | Հուլիս % | Օգոստոս % | Սեպտեմբեր % | Հոկտեմբեր % | Նոյեմբեր % | Դեկտեմբեր % | Ընդամենը Տարի % |
| 1 | **Սննդամթերք** | **0** | **0** | **18.8** | **26.6** | **34.4** | **42.2** | **42.2** | **42.2** | **65.8** | **77.2** | **88.6** | **100** | **100** |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ԳՆՈՐԴ**

_____________________
__________________________________
________________________
___________________________
______________________________
___________________________

---------------------------___ ___________
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

_____________________
__________________________________
________________________
___________________________
______________________________
___________________________

---------------------------___ ___________
/ստորագրություն/
Կ.Տ

**Հավելված 4**
**<<__>> <<____________>> 2015 թ.-ի կնքված**
**<<ԱՅԴ-ՇՀ-ԱՊՁԲ-15/1-5>>ծածկագրով**
**գնման պայմանագրի**

**Վաճառող**
________________________________________
*գտնվելու վայրը*___________________________
____________________________________________
____________________________________
ՀՎՀՀ՝____________________________________
ՀՀ՝_______________________________________
________________________________________

**Գնորդ**
____________________________________
*գտնվելու վայրը*_______________________
_______________________________________
_________________________________
ՀՎՀՀ՝________________________________
ՀՀ՝___________________________________
____________________________________

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N __

**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

,__է ,____________է 2015թ.

Պայմանագրի անվանումը՝ Սննդամթերքի գնման պայմանագիր:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ,__է ,____________է 2015թ.
Պայմանագրի համարը՝ <<ԱՅԴ-ՇՀ-ԱՊՁԲ-15/1-5>>
Գնորդն, ի դեմս տնօրեն՝ Ռուզան Հայրապետյանի և Վաճառողն՝ ի դեմս տնօրեն՝ _______________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարումները) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Վաճառողը ,__է ,____________է 2015թ.-ից ,__է ,____________է 2015թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները.

| **Գնման առարկայի անվանումը** | **Գնման առարկայի քանակական ցուցանիշները** | **Հանձնման ժամկետը** | **Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/** | **Վճարման ժամկետը /ըստ ժամանակացույցի/** |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | _______ | ---------- |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Հանձնեց

_______________________________

(ստորագրություն)

_______________________________

(Ազգանուն, Անուն)

Ընդունեց

_______________________________

(ստորագրություն)

_______________________________

(Ազգանուն, Անուն)